# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am


30. 05. 2012 N----------------------------------------

## Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն   Ո Ւ Ղ Ե Ր Ձ

### *ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

*Սիրելի՛ երեխաներ*

Շնորհավորում եմ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ և բարեմաղթում, որ ժպիտը, խինդն ու երջանկությունը լինեն Ձեր առօրյայի անբաժան մասը:

Ցանկանում եմ, որ անհոգ մանկությանը բնորոշ ինքնատիպ զգացողությունները Ձեզ ուղեկցեն տարվա բոլոր օրերին և մշտապես իրականություն դառնան Ձեր բոլոր երազանքները:

Յուրօրինակ գունազեղությամբ և միայն իրեն հատուկ երանգներ ունեցող այս տոնական օրվա կապակցությամբ հնչող շնորհավորանքներին զուգահեռ պետք է վստահեցնենք նաև, որ երեխաների իրավունքների պաշտպանությունն ու նրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքը համարվում է պետական քաղաքականության գերակա ուղղություն և մշտապես նշանավորվում նորովի դրսևորումներով:

Կրկին շնորհավորում եմ այս հիասքանչ տոնի առիթով և անսահման բերկրանք մաղթում բոլոր երեխաներին:

**Հարգանքներով**

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ